ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
Էլ.փոստ gyuxaygek@mail.ru
Հեռ. 0231-6-57-60

«03» 05 2016р.

N 54

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Ղահրամանյան*

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $77^1$-րդ հոդվածի առաջին մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի կողմից ապրիլ ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 4 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

# ՈՐՈՇՈՒՄ

«01» ապրիլի 2016 թվականի N 05-Ա

## ՆՎԵՐՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N48-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1. Ապրիլի 7-ի Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի բյուջեի միջոցներով գնել նվերներ՝ ծերության կենսաթոշակառու մայրերի, համայնքապետարանի, «Այգեկի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Մշակույթ և սպորտ» ՀՈԱԿ-ի, «Այգեկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, բուժկետի աշխատակազմի կանանց համար:
2. Գնումների համակարգողին (Ս. Թորոսյան)՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթներ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ ______________ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թվականի ապրիլի 1
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-5-67-60.

# ՈՐՈՇՈՒՄ

«12» ապրիլի 2016 թվականի N 06-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N48-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի ֆինանսական ծախսերի կատարման նախահաշվում կատարել ժամանակացույցի փոփոխություն՝
   1) Կառավարման ապարատի 01.1.1 բաժնի 4212 հոդվածի 4-րդ եռամսյակի գումարից 80,0 հազար դրամը տեղափոխել 2-րդ եռամսյակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆԵՐ ______________ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թվականի ապրիլի 12
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
Էլ.փոստ gyukaygek@mail.ru
Հեռ. 0231-6-57-60

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«14» ապրիլի 2016 թվականի N 07-Ա

## ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի «է» ենթակետով՝ *կարգադրում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (1.2-1) Գայանե Սարգսյանին 2016 թվականի ապրիլի 14-ին գործուղել ք. Արմավիր՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:
2. Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին (Ս. Թորոսյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ ______________ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թվականի ապրիլի 14
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
Էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«18» ապրիլի 2016 թվականի N 08-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածով, 167-րդ հոդվածի երրորդ մասով, 169-րդ հոդվածի երրորդ մասով, հիմք ընդունելով 2016 թվականի ապրիլի 18-ի համաձայնագիրը՝ *կարգադրում եմ.*

1. Աշխատանքի անհրաժեշտությունից ելնելով՝ 2016 թվականի ապրիլի 19-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավար Վարուժան Աբրահամյանին հետ կանչել ամենամյա արձակուրդից:
2. Ամենամյա արձակուրդի չօգտագործված 7 (յոթ) աշխատանքային օրը տեղափոխել այլ ժամանակ:
3. Համայնքի ղեկավարի տեղակալ Մայիս Աբրահամյանին 2016 թվականի ապրիլի 19-ից ազատել համայնքի ղեկավարի լիազորությունների կատարումից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՓՈԽԱՐԻՆՈՐԴ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թվականի ապրիլի 18
գ. Այգեկ